

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի նիստի
30 .01.2015թ.

Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /ղեկան/

Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին ԵՊՀ ԻՄ -ի տնօրեն Ս. Առաքելյանը, խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը, խորհրդի անդամները, ֆակուլտետի վարչական անձնակազմի ներկայացուցիչները, հրավիրված էին Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, տնօրենի օգնական Ն. Գրիգորյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Տնտեսագիտության ֆակուլտետի 2014 թ. գործունեության մասին հաշվետվություն:

/Ձեկ. Ն. Խուդավերդյան/

2.2014 -2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքների ամփոփման և ներկայացման մասին:

/Ձեկ. Ն. Խուդավերդյան/

3.Տնտեսագիտության ֆակուլտետի 2014 -2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի կազմակերպման համար նախապատրաստական աշխատանքների վիճակի մասին:

/Ձեկ. Ն. Խուդավերդյան/

4.Ընթացիկ հարցեր

1. Լսեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի 2014 գործունեության մասին ղեկանի հաշվետվություն

/Ձեկ. Ն. Խուդավերդյան/

Ձեզ ենք ներկայացնում 2014 թվականի ընթացքում տնտեսագիտության ֆակուլտետում իրականացված օպերատիվ գործունեությունը, որը բխում է մասնաճյուղի զարգացման 2011 – 2015 ռազմավարական ծրագրից և տնտեսագիտության ֆակուլտետի մարտավարական ծրագրից :

Նշենք, որ տնտեսագիտության ֆակուլտետում բակալավրիական կրթություն է իրականացվում երկու՝ <Տնտեսագիտության տեսություն> և <Սերվիս> մասնագիտություններով: Համապատասխանաբար գործում են երկու՝ <Ընդհանուր տնտեսագիտության> ու <Տուրիզմի կառավարման և մշակութաբանության > մասնագիտացված ամբիոնները:

Ներկայումս ֆակուլտետում սովորում է 142 ուսանող, որոնցից 29 անվճար /լրիվ փոխհատուցվող համակարգում/ , 113 վճարովի համակարգում:

Բուհական համակարգում տեղի ունեցող բոլոր փոփոխություններն ու նորարությունները կանոնավոր կերպով իրականացվում են նաև տնտեսագիտության ֆակուլտետում, մասնավորապես՝ ուսուցանվող մասնագիտություններում և կրթության որակի, և որակավորման մակարդակի բարձրացման նպատակներով:

Հարկ է նշել, որ դեկանատը ցուցաբերում է բաց, հրապարակային գործելակերպ, աշխատանքները կազմակերպված են այնպես, որ ուսանողների վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալները, մասնավորապես ակադեմիական առաջադիմությունը, լինի մատչելի և հասանելի ոչ միայն ուսանողների, այլև ողջ հանրության համար:

Քննաշրջանի ընթացքում ուսանողների յուրաքանչյուր օրվա գրանցված արդյունքները փակցվում են ֆակուլտետի հայտարարությունների տախտակին, իսկ մասնագիտությունների ամփոփ թերթիկը տեղակայվում է մասնաճյուղի կայքէջում: Վերահսկման այս համակարգի ներդրումը, ձևավորելով ուսանողների մոտ առողջ մրցակցության հոգեբանություն, ակնառու դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա:

Ֆակուլտետում թափանցիկ են իրականացվում նաև յուրաքանչյուր կիսամյակ կրթաթոշակների նշանակման և յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացվող փոխատեղման գործընթացները: 2014 -15 ուս. տարվա առաջին կիսամյակին ֆակուլտետի 23 ուսանողներ ստացել են կրթաթոշակ, որոնցից երկուսը՝ անվանական: Հատկանշական է, որ նշված գործընթացներում լիարժեք մասնակցություն են ունենում նաև ուսանողները՝ որպես գլխավոր շահառու: Անառարկելի է այն, որ ուսանողների կարգապահության, հաճախումների և առաջադիմության մակարդակի միջև գոյություն ունի ուղիղ համեմատական կապ:

Ֆակուլտետում ներդրված է ուսանողների հաճախումների համակարգչային ամփոփման ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում ամեն ամիս կանոնավոր ամփոփել ուսանողների հաճախումները և անհրաժեշտության դեպքում գործող

կարգապահական կանոնակարգի համաձայն ձեռնարկել համապատասխան քայլեր /դիտողություն, բացատրական աշխատանքներ, գրավոր նկատողություններ և այլն/ : Նշված գործընթացները իրականացվում են դեկանատի կողմից ըստ կանոնադրության պահանջների , որին էլ օժանդակում է ուսումնական խորհրդատուի ինստիտուտի գործունեությունը: Արդյունքում բարձրացնում է ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, ուսանողների և կարգապահության մակարդակը և հասարակական ակտիվությունը:

Ֆակուլտետում խիստ ուշադրության կենտրոնում են պահվում մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի պահանջները, դրանք ժամանակին ներդրվում են ուսումնական գործընթացում և նույնպես միտված են կրթության որակի բարձրացմանը: Նշված խնդրի լուծմամբ հիմնականում զբաղվում են մասնագիտացված ամբիոնները, որոնք իրականացնում են նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ կապված անհրաժեշտ /կումպետենտ / քաղաքականության մշակումն ու իրացումը, դրանց մասնագիտական մակարդակի բարձրացմանը ուղղված աշխատանքները: Նշվածի վկայությունը ֆակուլտետում կանոնավոր կերպով կազմակերպվող դասալուսմներն ու բաց դասերն են: 2014 թվականին ամբիոնների կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը, դասընթացների բովանդակությունը, ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները. արդյունքում ստեղծվել են դասընթացների փաթեթներ՝ պորտֆոլիոներ, որոնք էլ պլանավորված և կանխատեսելի են դարձրել ողջ դասընթացը՝ նպաստելով որակի բարձրացմանը: Նշենք նաև, որ թեպետ փոքր ինչ դանդաղ, սակայն ֆակուլտետի կազմում գործող ամբիոններում, 2014 թվականին գրանցվել է գիտական կյանքի աշխուժացում, այն է <Ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվել է 1 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 զեկուցումների թեզիս, տպագրվել 7 գիտական հոդված:

<Տուրիզմի կառավարման և մշակութաբանության> ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 9 գիտական հոդված: 2014 թվականի նոյեմբերին Ազգագրության և հնագիտության ինստիտուտում անց է կացվել ամբիոնի դասախոս Լ. Բեգինյանի <Հուղարկավորության ծեսերն ու սովորույթները Տավուշում> թեմայով թեկնածուական ատենախոսության նախապաշտպանությունը:

Ֆակուլտետը պարբերաբար համալրվում է տեխնիկական միջոցներով, հագեցած լսարաններով, աշխատասենյակներով: Օրեցօր ավելանում է ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ դասեր վարող դասախոսների թիվը: Ֆակուլտետի ամբիոնները համագործակցում են մասնաճյուղի ՈՒԽ -ի և ՈՒԳԸ -ի հետ, կոորդինացնելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բոլոր ֆակուլտետների այն

քննարկումները, որոնք նվիրված են եղել տնտեսագիտական թեմաներով վերլուծություններին:

Դեկանատը ամբիոնների հետ մեկտեղ մեծ նշանակություն է տալիս ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությանը: Քանի որ այս մեխանիզմը թերությունները և թերացումները վերհանելու, վերացնելու դրականն ու առաջադիմականը խթանելու լուրջ գործիք է:

Ինչպես բուհերում, ֆակուլտետում ևս, այսօր մեծ դեր է վերապահված ուսանողական ինքնակառավարման մարմիններին, որոնք կոչված են լիարժեք դարձնելու ուսումնառությունը, նպաստելու անհրաժեշտ և խորը գիտելիքների ձեռք բերմանը, ինչպես նաև աշխուժացնելու, առավել արդյունավետ դարձնելու ուսանողների առօրյան: Ֆակուլտետում գործող ՈւԽ –ն և ՈԻԳԸ, պարբերաբար կազմակերպում են գիտական միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր: Եվ բնական է, որ այս ամենը միտված է ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը և պայմանավորված կրթության որակի բարձրացման նպատակներով:

Այսպիսով, դրականը կարելի է համարել այն հանգամանքը, որ ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներն աշխատում են լավ կոորդինացված և կանոնակարգված, սակայն այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ դեռևս ամբիոնային գիտական կյանքի կազմակերպումը այն մակարդակի վրա չէ, որ յուրաքանչյուր տարի հստակ պլանավորվեն և իրականացվեն տարամասշտաբ գիտաժողովներ, սեմինարներ, ֆորումներ և այլն: Մեզ համար աննպաստ է այն հանգամանքը, որ մեր հիմնական դասախոսները գրեթե ընգրկված չեն պետական կամ ոչ պետական գիտական ծրագրերում: Մեր ամբիոնները թերանում են հրապարակած գիտական մենագրությունների հարցում, քիչ է գիտական հոդվածների քանակը:

Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքները իրականացվում են բարձր պատասխանատվությամբ և պատշաճ կուլտուրայով. աշխատակիցների մասնակցությամբ՝ սերտ համագործակցելով մասնաճյուղի մյուս բոլոր՝ և՛ զծային, և՛ ֆունկցիոնալ ստորաբաժանումների հետ:

Արտահայտվեցին - <Ընդհանուր տնտեսագիտության > ամբիոնի վարիչ Հ. Մարգարյանը, <Տնօրինի կառավարման և մշակութաբանության> ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը, դոցենտ Ա. Պոտոյանը, ասիստենտ Լ. Լաչիկյանը, ասիստենտ Գ. Միրոյանը

Նրանք նշեցին, որ ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումները աշխատել են մեծ պատասխանատվությամբ և համակարգված: Որի արդյունքում ֆակուլտետում կան զգալի դրական փոփոխություններ թե՛ ուսումնական պրոցեսի կազմակերպման, թե՛ կարգապահության առումով: Հաշվի առնելով այս ամենը

որոշեցին հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ստորաբաժանումների գործունեությունը գնահատել դրական:

Որոշեցին - հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ստորաբաժանումների գործունեությունը գնահատել դրական:

2. 2014 -2015 ուս. տարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքների ամփոփման և ներկայացման մասին:

/Զեկ. Ն. Խուղավերոյան/

Ն. Խուղավերոյանը նշեց, որ 2014 – 2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ստուգարքների և քննությունների արդյունքները ըստ ֆակուլտետում գործող մասնագիտությունների դեկանատի կողմից ամփոփվել և վերլուծվել է ամենայն մանրամասնությամբ: Ուստի ներկայացնեմ, որ ֆակուլտետում քննաշրջանը կազմակերպվել է թվով 142 (անվճար 29, վճարովի՝ 113) ուսանողների համար, այդ թվում՝ <տնտեսագիտության տեսություն> մասնագիտության՝ 93 (անվճար՝ 16, վճարովի՝ 77) ուսանողի և <Սերվիս> մասնագիտության՝ 49 (անվճար՝ 13, վճարովի՝ 36), ի լրում նշեմ նաև, որ քննաշրջանի անցկացման ընթացքում ֆակուլտետի թվով 6 ուսանող (4 ուսանող <տնտ. տեսության> մասնագիտության, 2 ուսանող <Սերվիս> մասնագիտության) գորակոչվել են Ազգային բանակ և թվով 10 ուսանող (8 <տնտ. տեսություն>, 2 <Սերվիս>) վերադարձել են տարկետումից:

Այսպիսով, ուսումնական աշխատանքային պլանով տվյալ կիսամյակում նախատեսված ստուգարքներն ու քննությունները դրական են հանձնել թվով 95 ուսանող (54 տնտ. 41 սերվիս): Հետևաբար պարտք ունեն 47 (39 տնտ., 8 սերվիս): Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 67% համեմատած նախորդ (2013 – 2014 ուս. տարվա) առաջին կիսամյակի ցուցանիշների հետ (59,62%): Ֆակուլտետում ընդհանուր առաջադիմությունը գրանցել է 7 % աճ:

Ըստ մասնագիտությունների առաջադիմության պատկերը հետևյալն է՝
<տնտ. տեսության> նախկին 58 % դիմաց 58% - **մնացել է անփոփոխ**
<սերվիս> նախկին 63 % դիմաց 84 % - աճ է գրանցվել 21 %:

Ստորև ներկայացնում եմ առաջադիմությունն ըստ մասնագիտությունների և կուրսերի.

<Տնտ. տես.>

I կուրս

Ուսանողների թիվը 33 (5 անվճար, 28 վճարովի), որից 2 ուսանող գորակոչվել է ԱԲ և 6 ուսանող վերադարձել տարկետումից: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 26 ուսանող և պարտք ունեն 7-ը: Կուրսը ստուգարքներ է հանձնել 9 առարկաներից և գրանցել 100 % առաջադիմություն: Իսկ եզրափակիչ գնահատմամբ՝ 2 առարկաներից, ընդ որում

Տնտ. տես - 1 առարկայից գրանցել 100 % առաջադիմություն, իսկ մաթ. անալիզ -1 ` գրանցել 79 % առաջադիմություն:

Այսպիսով ստացվել է, որ պայմանավորված Մաթ. անալիզ առարկայի արդյունքներով կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 79 % (անվճար 100% , նախորդ ուս. տարվա 64%): 13 % աճ է գրանցվել

II կուրս

Ուսանողների թիվը 25 (5 անվճար, 20 վճարովի), որից 2 ուսանող գորակոչվել են ԱԲ:

Կուրսը ստուգարքներ է հանձնել 2 առարկաներից (<Կրոնների պատմություն> և <Ազգային տնտեսություն>) և պայմանավորված <Ազգային տնտեսություն> առարկայի արդյունքներով ստուգարքների կտրվածքով առաջադիմությունը կազմել է 68 %: Եզրափակիչ գնահատմամբ՝ 5 առարկաներց: Մանրամասն վերլուծության շնորհիվ կարող ենք փաստել, որ առաջադիմության անկումը հիմնականում պայմանավորված է մաթ. բլոկի առարկաների արդյունքներով: Այսպիսով կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 52 % (անվճար 100%) նախորդ ուս. տարվա 32% դիմաց: Այնուամենայնիվ այստեղ էլ է գրանցվել աճ 20% -ի չափով:

III կուրս

Ուսանողների թիվը 35 (6 անվճար, 29 վճարովի), որից 2 ուսանող վերադարձել են տարկետումից: Կուրսը ստուգարքներ է հանձնել 4 առարկաներից և արձանագրել 80 % առաջադիմություն: Եզրափակիչ գնահատմամբ՝ 4 առարկաներց : Արդյունքում կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 43 % (անվճար 100%) (հիմնականում պայմանավորված <Տնտ. մտքի պատմություն> առարկայից գրանցած արդյունքներով):

<Մերվիս> մասնագիտություն

I կուրս

Ուսանողների թիվը 14 ուսանող (4 անվճար, 10 վճարովի), 1 ուսանող գորակոչվել է ԱԲ, 2 ուսանող վերադարձել են տարկետումից: Կուրսը ստուգարքներ է հանձնել 4 առարկաներից և արձանագրել 100 % առաջադիմություն և եզրափակիչ գնահատմամբ՝ 3 առարկաներից : Արդյունքում կուրսի ընդհանուր

առաջադիմությունը կազմել է 93 % (անվճար 100%), նախորդ ուս. տարվա 65% դիմաց: Աճը՝ 28%:

II կուրս

Ուսանողների թիվը 16 ուսանող (4 անվճար, 12 վճարովի), որից 1 ուսանող զորակոչվել է ԱԲ: Կուրսը ստուգարքներ է հանձնել 5 առարկայից և գրանցել 94 % առաջադիմություն, եզրափակիչ գնահատմամբ՝ 3 առարկաներից: Ընդհանուր առաջադիմությունը նախորդ ուս. տարվա 56% դիմաց կազմել է 94%(անվճար 100%), որն էլ պայմանավորված է ԱԲ զորակոչված ուսանողի արդյունքներով:

III կուրս

Ուսանողների թիվը 19 ուս. (5 անվճար, 14 վճարովի), կուրսը ստուգարքներ է հանձնել 3 առարկաներից և գրանցել է 68 % առաջադիմություն, որն էլ հիմնականում պայմանավորված է <Մարքեթինգը և գովազդը սերվիսի ոլորտում> առարկայի արդյունքներով, եզրափակիչ գնահատմամբ՝ 3 առարկաներից: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 68% (անվճար 100%):

Ամփոփելով նա նշեց, որ դրական փաստ և միտում եմ համարում, այն հանգամանքը, որ ֆակուլտետում անվճար համակարգում ուսումնառվող ուսանողները գրանցել են 100% առաջադիմություն: Քննաշրջանի արդյունքում 8 ուսանող գրանցել է գերազանց առաջադիմություն (2 տնտ. 6 սերվիս մասնագիտությունում): Քննական գործընթացները չեն բողոքարկվել որևէ ուսանողի կողմից և անց են կացվել պատշաճ մակարդակով:

Արտահայտվեց -ԵՊՀ Իմ տնօրեն Ս. Առաքելյանը

Ս. Առաքելյանը նշեց, որ տնտեսագիտության ֆակուլտետի առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների ամփոփման արդյունքների ցուցանիշները համեմատած ԵՊՀ Իմ մյուս ֆակուլտետների համանման արդյունքների ցուցանիշների հետ համեմատաբար ցածր է: Սակայն տնօրենի կողմից դա գնահատվեց որպես օբյեկտիվության դրսևորում: Ընդհանուր առմամբ Ս. Առաքելյանը նշեց, որ գոհ է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կատարած աշխատանքից, իսկ կիսամյակում ֆակուլտետի իրականացրած աշխատանքները գնահատեց դրական:

Որոշեցին - տնտեսագիտության ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2014-2015 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել դրական:

3.Լսեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի 2014 -2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի կազմակերպման համար նախապատրաստական աշխատանքների վիճակի մասին:

/Ձեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ հունվար ամսին քննաշրջանին զուգահեռ ֆակուլտետի ղեկանատը և ամբիոնները իրականացնում են երկրորդ կիսամյակի դասընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ: Ուսումնասիրվել է լսարանային ֆոնդը, այն ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական գործընթացի կազմակերպման պրոցեսին:

Ամբիոններում ընթանում է ծրագրերի նորացման, ընթացիկ և եզրափակիչ քննական հարցաշարերի համալրման և ներկայացման գործընթացը: Ֆակուլտետում գործող երկու մասնագիտական ամբիոններում ընթանում է երկրորդ կիսամյակի դասընթացների փաթեթների /պորտֆոլիոների/ ստեղծման աշխատանքները:

Ն. Խուդավերդյանը նշեց, որ ղեկանատի կողմից կազմված են երկրորդ կիսամյակի դասացուցակը, որը ամբողջովին համապատասխանում է աշխատանքային ուսումնական պլաններին, ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածություններին: Երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական կազմն ամբողջությամբ համալրված է: Այսպիսով, բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները իրականացված են և որևէ խոչընդոտ չկա երկրորդ կիսամյակի գործընթացը սկսելու համար:

Արտահայտվեց - ԵՊՀ Իմ տնօրեն Ս. Առաքելյանը

Ս. Առաքելյանը նշեց, որ եզրափակիչ քննության հարցաշարը պետք է կազմված լինի այնպես, որ ընթացիկ քննության հարցաշարի հարցերը չներառվեն եզրափակիչ քննության հարցաշարի մեջ, իսկ եզրափակիչ քննությունների հարցերը՝ ամփոփիչ մասնագիտական հարցաշարի մեջ:

Որոշեցին

- 1. Տնտեսագիտության ֆակուլտետի 2014 -2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի կազմակերպման համար նախապատրաստական աշխատանքների վիճակը գնահատել լավ:***
- 2. Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի 2014 -2015 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:***

4.Լսեցին - ընթացիկ հարցեր

1. Ֆակուլտետի <Ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնի գործավար Ա. Զախարյանի պարզևատրման մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար միշտ էլ օգտագործվել են տարբեր տեսակի խրախուսման ձևեր, այդ թվում նաև դրամական պարգևատրում: Ն. Խուդավերդյանը նշեց, որ փետրվար ամսվա կտրվածքով առաջարկում է դրամական խրախուսանքի ներկայացնել ֆակուլտետի <Ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնի գործավար Ա. Զախարյանին բարեխիղճ աշխատանքի համար:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Ն. Մկրտչյանը

Նրանք նշեցին, որ իսկապես Ա. Զախարյանը կատարել է մեծ ծավալի աշխատանքներ և լիովին արժանի է դրամական պարգևատրման:

Որոշեցին - Ա. Զախարյանին ներկայացնել դրամական պարգևատրման:

Խորհրդի նախագահ

Ն. Խուդավերդյան

Քարտուղար

Գ. Առուշանյան